

դանոցի բարերարներու ննջեցելոց հոգւոյն համար, և այս միջնադարեան եկեղեցիին գաւիթը կը թաղուէին հիւանդանոցի մեծ բարերարները:

Այս եկեղեցիին հաստաբետ պատերուն կառուցուածքը կը յայտնէ թէ եկեղեցին շինուած էր ա՛յն թուականին որ անհրաժեշտութիւն մը կը տիրէր Ս. Քաղաքին պարիսպներէն դուրս գտնուած շէնքերը ամրացնել, վախնալով արշաւանքներէն այն թշնամիներուն որ ժԲ. դարուն մօտեցան մինչև Ս. Քաղաքին դուռները: Բայց երբ իսլամները 1187ին Երուսաղէմը գրաւեցին, Քրիստոսի Ըմբռնման եկեղեցիին չմասնացին. յիշատակարան մը՝ որ գրուած է Երուսաղէմի գրաւումէն յետոյ, հետեւեալ կերպով կը գրէ այդ մասին. « Ձիթենեաց լերան ստորոտը Գեթսեմանի ըսուած տեղը կար եկեղեցի մը, ուր Յիսուս Քրիստոս աղօթեց, եկեղեցիին անունն էր Ս. Փրկիչ. հոն կալանաւորեցին Յիսուսը և հոն էր որ ան արեան կայլակներու նման քրտինք թափեց » (de Vogüé, les Eglises de la Terre Sainte, էջ 442):

3. Քրիստոսի Ըմբռնման եկեղեցին հայոց սեպհականութիւն.

Վերոգրեալ յիշատակարանը ցոյց կու տայ թէ Գեթսեմանիի Ըմբռնման եկեղեցին քաղաքին գրաւումէն յետոյ ալ կանգուն էր. մենք հոս ընդհատեցինք նոյն եկեղեցիին պատմութիւնը, վասն զի, 1187ին, Սալահէտտինի Երուսաղէմի գրաւումովը ու լատիններուն վտարմամբ Ըմբռնման եկեղեցիին սեպհականութեան վիճակը կը փոխուի. մեծագոյն հաւանականութեամբ հայ միաբանութիւնը կը տիրանայ նոյն եկեղեցիին, յաղթականին հայոց հանդէպ համակրական վերաբերմունքին յայտնի հետեանքովը: Գողգոթայի, Քրիստոսի Գերեզմակին, Ս. Ասուածածնի եկեղեցիին և Ս. Յակոբի վանքին հայոց կողմէ տիրացումը Սալահէտտինի բարեացակամութեան արգիւնք կրնանք նկատել: Հետեւաբար Ըմբռնման եկեղեցիին հայոց կողմէ սեպհականութիւնը կ'օկսի 1187էն և կը տեւէ մինչև ևս անոր վերջնական կործանումը: Այս ենթադրութիւնը անտարակոյս տպացոյց մը չի կրնար ըլլալ ճշմարտութիւնը հաստատելու համար, սակայն մենք կը համարձակինք խոնարհաբար ըսել թէ ունիւմք այդ մասին պատմական